ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2022 թվականի N 135-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Հարություն Թանդիլյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, Ծաղկաշատ գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշման ու տնտեսական գրքից քաղվածքները, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Վերականգնել Հարություն Թանդիլյանին (ծնված՝ 31.03.1962թ.) պատկանող՝ ներքոհիշյալ գյուղատնտեսական և բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը.
   1.1 06-050-0136-0009 ծածկագրի տակ գտնվող 0.2212 հա 5-րդ կարգի խոտհարքի նկատմամբ.
   1.2 06-050-0028-0011- ծածկագրի տակ գտնվող 0.2548 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ.

2. Հարություն Թանդիլյանին սեփականության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Ծաղկաշատ գյուղում գտնվող, 0.2548 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Ծաղկաշատ, 8-րդ փողոց, 1-ին փակուղի, 4 հողամաս փոստային հասցե:
3. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասերի հատակագծերով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. ապրիլի 08
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2022 թվականի N 136-Ա

ՄԱՐԻԵՏԱ ԿԱՌԼԵՆԻ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 08.04.2022թ. արձանագրությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ 3/4-20 հասցեի բնակիչ Մարիետա Կառլենի Ծատուրյանին նշանակել անչափահասներ Կարեն Սամվելի Ալավերդյանի /ծնված՝ 16.08.2016թ./, Անգելինա Սամվելի Ալավերդյանի /ծնված՝ 02.12.2018թ./ և Նարեկ Սամվելի Ալավերդյանի /ծնված՝ 22.12.2020թ./ խնամակալ:
2. Մարիետա Կառլենի Ծատուրյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու անչափահասներին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը՝ անչափահասներին պահելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2022թ. ապրիլի 08
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2022 թվականի N 137-Ա

ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.12.2009թ. թիվ 1/փ-40 դրական եզրակացությունը, համայնքի ավագանու 31.03.2022թ. N 16-Ա որոշումը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Մովսես Յուրիկի Վահրամյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-002-0275-0015 ծածկագրով, 0.16 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարքը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Մովսես Յուրիկի Վահրամյանին պարտավորեցնել վճարել սեփականության իրավունքով իրեն պատկանող, 0.16 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 713680 (յոթ հարյուր տասներեք հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

3. Մովսես Յուրիկի Վահրամյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.16 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ բնակավայր, 1 հողամաս փոստային հասցե:
4. Նշված փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:
5. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. նշված հողատեսքի փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և ապահովել գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. ապրիլի 08
ք. Ալավերդի